




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.875

Ն. ՈՍԵՐՈՎՍԿԱՅԱ

ԻՆՉԻ՞ ԿԱՄԱՐԵ
ՊԵՐՔ
ԿՈՌՊԵՐԱՅԻԱՆ
ԳԵՂՁԿՈՒՆՈՒՆ

« ԶԱԿԿՆԻԳԱ »



13 NOV 2013

15 JAN 2010

334

0-711

47

Ն. ՈՍՏՐՈՎՍԿԱՅԱ

300
2719-ՈՍ

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Ե ՊԵՏՔ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ
ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒՆ

1003
12948

Թարգմանեց յեզ Լրացրեց
Պ. ԱՐԵՎՅԱՆ

Գրքի Անդրկովկասյան Կոոպերատիվ
Ընկերություն

Հր «ԶԱԿԿՆԻԳԱ»

Թ Ի Ֆ Լ Ի Ս
1925

006
UN-0179

Թ Ա Ր Գ Մ Ա Ն 2 Ի 3

Ն. Ոստրովսկայայի «Ինչի՞ համար և պետք կոոպերացիան գեղջկուհուն և բանվորուհուն» գրքույկի մեջ յես արել եմ հայ ընթերցողի համար անհրաժեշտ լրացումներ և լրացումները վերաբերում են գրքույկի մի քանի տեղերը ավելի պարզաբանելուն և, մանավանդ, Սորհրդային Հայաստանի մասին կոոպերացիայի մասին տեղեկություններ տալուն և մեր տնտեսական կյանքից որինալիներ բերելուն:

Ի հարկե, յեթե գրքույկը գիտական աշխատություն լիներ, լրացումները պետք եր առանձին բերել՝ ծանոթությունների կամ հավելվածի ձևով: Բայց Ն. Ոստրովսկայայի գրքույկը ժողովրդական լայն զանգվածների համար գրված հանրամատչելի մի գործ է, Վորի ընթերցանությունը կդժվարանար, յեթե լրացումները առանձին անեյինք և չկապեյինք բնագրի հետ:

Պ. ԱԲԵԼՅԱՆ

**ԻՆՉԻ՝ ՀԱՄԱՐ Ե ՊԵՏԲ ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ
ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒՆ**

1. ԻՆՉ Ե «ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ»

Կոոպերացիա խոսքը հայերեն չէ: Կոոպերացիա նշանակում է միասին գործել, ի մի հավաքել մեր միջոցները, ջանքերը, մեկտեղացնել մեր աշխատանքը, վոր հասնենք մեր դրած նպատակին:

Շատ վաղուց, շատ տասնյակ տարիներ մեզանից առաջ, Անգլիայի Ռոչդել քաղաքի ջուհակները առաջինն յեղան, վոր վճուեցին միասին գործել: Նրանք վճուեցին իրենց աշխատանքը միացնել, մեկտեղ, միասին գործել, վոր կարողանան ավելի եժան գնով իրենց հարկավոր ապրանքները գնել, վոր այդ ապրանքներն ավելի լավ տեսակի լինեն, քան այն ապրանքները, վոր նրանց վրա սաղացնում էին խանութպանը կամ գործարանատերը (Փաբլիկանտը) իր գործարանային խանութում:

Խանութպանը ինքը վոչ մի ապրանք չի արտադրում, չի պատրաստում: Գյուղական ընտանիքն է, վոր մշակում է հողը, նայում է անասուններին ու թռչուններին և տալիս է ապրուստի համար՝ հաց, միս, ձու, յուղ, կաթ և ուրիշ նման մթերքներ (ուտելեղեն), հագուստի ու վրտնամանի համար՝ բուրդ, կաշի և այլն: Գյուղական ընտանիքն է, վոր այս ամենը տալու համար ինքը անքուն է մնում, կուշտ փորով հաց չի ուտում: Նա յե, վոր մեջքը կռացնում է գյուղական ծանր աշխատանքի ժամանակ:

Բանվորներն են, վոր աշխատում են և տալիս են նավթ, աղ, լուցկի, շաքար, չիթ, կոշիկներ, ապակի, ամանեղեն և գործարանային ուրիշ ապրանքներ։ Բանվորներն են, վոր շարունակ կորացած մեջքերով են աշխատում և շատ անգամ շնչափառ են լինում արհեստանոցներում (լուցկու գործարաններում)։ Բանվորներն են, վոր հաճախ այնպիսի շորի մեջ են աշխատում, յերբ գործ կարելի չե անել միմիայն մերկ մարմնով, այն ել կաշին ճաքճքում և արյունվիկ և լինում (շաքարի գործարաններում)։ Շատ անգամ ել բանվորները ստիպված են լինում կանգնել մինչև ծնկները հասնող աղի ջրի մեջ այնքան ժամանակ, վոր աղը ուտում է նրանց մարմինը և վերք է բաց անում։ Բանվորն է, վոր աշխատում և տքնում է ներկատների գոլորշու, ջուլհականոցների աղմուկի և թնդյունի մեջ։ Բանվորն է, վոր նույն աշխատանքը կատարում է մեխեր, գութաններ, գերանդիներ և այլ գյուղատնտեսական գործիքներ արտադրելիս։

Բայց յերբ բանվորին հարկավոր է գյուղացու արտադրած մթերքը, նա գնում է խանութ և այնտեղ է գնում այդ մթերքը։ Յերբ գյուղացուն հարկավոր են բանվորի պատրաստած նավթը, աղը, մեխերը, կտորեղենը, նա գնում է խանութ և վաճառականից առնում իրեն պետքական ապրանքը։

Խանութպանը իր գնորդներին (մուշտարիներին) հարկավոր ապրանքները ձեռք է բերում քաղաքի վաճառականից։ Խանութպանը ապրանքի առքին (իր վրա նստած գնին) ավելացնում է իր ծախսերը և ոգուտը և այնպես է ծախում իր գնորդին։ Սակայն, յեթե խանութպանը իր առքին չափազանց շատ ավելացնե և չափից դուրս թանկացնե ապրանքը, այն ժամանակ ամեն մարդ այդքան թանկ գնով չի վերցնի ապրանքը։ Ապրանքը այս դեպքում կարող է պառկած մնալ խանութում։ Հենց այստեղ է, վոր խա-

նութպանը խաբեբայություն է բանեցնում։ Վորպեսզի ավելի մեծ ոգուտ ունենա, ասենք, նավթի մեջ, բացի նավթի առքը ավելացնելուց, խանութպանը նույնպես ավելացնում է ջուր։ Խանութպանը մի տակառ նավթին ջուր է ավելացնում և մեկ ել տեսնում ես այս ձրի ջուրը վառտակ է բերում խանութպանին,—նա տաս-տասնհինգ ֆունտ ավելի նավթ է ունենում ծախելու համար։

«Հոգ չե, վոր նավթը ջրախառն է։ Գյուղացի գնորդը ուրիշ տեղ չունի նավթ գնելու համար, այս ջրախառն նավթն ել յոլա կտանի»—ահա թե ինչ է մտածում առևտրականը։

Իսկ մինչև վոր ապրանքը հասնում է խանութպանին, նրանից իրենց վաստակն են ստանում նույնպես ուրիշ շատ մեծածախ վաճառականներ և նրանցից ավելի փոքր խանութպաններ։

Նույն ճանապարհը անցնում են նույնպես բանվորների համար ծախվող ապրանքները։

Հացը, միսը, բուրդը և նման ապրանքները գյուղի խանութպանը գնում է գյուղացիներից և հավելումով իր կողմից ծախում է քաղաքի առևտրականին։ Քաղաքի վաճառականն ել իր առքին ավելացնում է իր ծախսերն ու գաստակը և ծախում է այդ ապրանքները մի ուրիշին։ Այդ ուրիշն ել վաճառում է մեծածախ առևտրականին։ Մեծածախ առևտրականը իր հերթին այդ ապրանքները գործակալի (կոմիսսիոների) միջոցով վաճառում է գործարանին կամ խանութպանին հատավաճառ ծախելու համար։ Յեւ ամեն մեկը իր առքին ավելացնում է իր ծախսերը և վաստակը։

Դուրս է գալիս, վոր գյուղը արտադրում է հաց ու այլ ապրանքներ, վոր հարկավոր են քաղաքին, իսկ քաղաքը արտադրում է գործարանային ապրանքներ, վոր հարկավոր են գյուղին։ Իսկ գյուղի և քաղաքի միջև ձգված և պանաղան տեսակի առևտրականների մի շղթա, վորով

պետք է անցնեն գյուղի ապրանքները քաղաքին և քաղաքի ապրանքները գյուղին հասնելու համար: Այդ ապրանքները գյուղի և քաղաքի միջև կանգնած առևտրականների ամեն մի գույզ ձեռքի շփումից ավելի յեն թանկանում, իսկ հաճախ և ավելի յեն վատանում մինչև վոր, վերջապես, կրնան անգնորդի ձեռքը, վորը այդ ապրանքները ձեռք է բերում վոչ թե ծախելու, այլ սեփական կատարելուն գործածելու համար:

2. Ինչո՞ւ ՀԱՄԱՐ Ե ԿՈՈՊԵՐԱՅԻՄԱՆ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎԱԾ ՆԱ.

Այ, կոոպերացիան ել հենց նրա համար է հարկավոր, վոր մեջ տեղից հեռացնենք այդ միջնորդ վաճառականին, վոր ապրանքը այդքան ձեռքերով չանցնի: Իսկ վորպեսզի մեջտեղից հեռանա, կորչի միջնորդ վաճառականը, հարկավոր է մի ուրիշ բան, հարկավոր է, վոր միասին փող վայր գան, մեջ տեղ բերեն գնորդ գյուղացիք, այդ փողով բաց անեն մի խանութ, բայց խանութ վոչ թե չարչու, այլ իրենց, ապրանքի պետք ունեցող գյուղացիների կամ, ինչպես ասում են, սպառողների համար: Այսպիսով, գյուղում կամ շրջանում կկազմակերպվի ապրանք գործածողների, սպառողների ընկերություն, — սպառողական ընկերություն: Այդ սպառողական ընկերությունը գյուղացիներից հավաքած ընդհանուր փողով կգնի նրանց համար քաղաքի հարկավոր ապրանքներ: Ի հարկե, հավաքված փողը այնքան պետք է լինի, վոր դործ կարելի լինի դարձնել:

Ահա թե սպառողական ընկերությունն ել ինչպես են հիմնում: Հավաքվում են համագյուղացիք, այսինքն՝ միևնույն գյուղի բնակիչները և կազմում են սպառողների ընկերություն (սպառել, պարպել մի խոսք է, այս գեպքում նշանակում է ապրանք գործածող, ապրանք պարպող): Ամեն մի գյուղացի մտցնում է իր սպառողական ընկերության գանձարկը իր փայավճարը, վոր ապրանք գնելու

և դործը դարձնելու միջոցներ լինին: Ամեն մեկը կմտցնի, որինակ, մի ռուբլի: Յեթե մեկի համար զժվար է մի անգամից այդ ռուբլին տալ, նա կտա մաս-մաս, ասենք, ամսական 25-ական կոպեկ, մինչև վոր լրանա նրա անգամավճարը, վորը կարող է լինել մի, յերկու ռուբլի և ուրիշ գումար, նայած թե սպառողական ընկերության ընդհանուր ժողովը ինչքան է նշանակել փայավճար (փայավճար կամ անգամավճար են ասում այդ փողին):

Հենց այդ սպառողական ընկերությունը արդարացի գնով կգնե իր անդամներից հացահատիկ, անասուններ, յուղ, պանիր, ձու, բուրդ, կաշի, խոտ, խաղող, բոժոժ և այլն և այլն: Այդ ապրանքները կգնե գյուղացիներից, կըտանի քաղաք և այնտեղ կծախե սպառողական ընկերությունների միությունը, վորը կարող է լինել մի կամ մի քանի գավառի կամ նույն իսկ ամբողջ պետության սպառողական ընկերությունների միություն: Ծախած հում նյութերի (ապրանքների) գնով գյուղական սպառողական ընկերությունը սպառողական ընկերությունների միությունից կգնե քաղաքի ապրանք: Սպառողական ընկերությունը իր միությունից ապրանք է գնում ձեռնարկ, այսինքն՝ չափավոր գներով: Ինչ է պատճառը, վոր սպառողական ընկերությունը կարողանում է իր միությունից քաղաքի ապրանք ստանալ ձեռնտու և վոչ թանկ գնով:

Պատճառն այն է, վոր կոոպերացիան վաստակի յետևից չի ընկնում, — նրա զլխավոր նպատակը մեծ ոգուտը չէ, այլ իր անդամներին պետքական, եժան և լավ ապրանք տալը: Կոոպերացիան խաբեբայություն ասած բանը չի սիրում, ինչպես ասում են, չի հանդուրժում: Կոոպերատիվի նպատակը այն է, վոր նրա անդամները իրենց պետքերի համար կարողանան լավ ապրանք ստանալ, և վոչ թե լավ վաստակ ունենալ: Մեծ ոգուտի տեղ ապրանքի առքին կոոպերատիվը այնքան է ավելացնում, վոր դուրս գա ապրանքը տեղափոխելու ծախսը, խանութի քրե-

հր, գործակատարի և մյուս ծառայողների վարձը և նրան ծախսերը:

Քաղաքում ել նույնն է: Բանվորները գործարանում ապրանք են արտադրում: Սպառողական կոոպերատիվները կենտրոնական միությունը (Ռուսաստանում՝ Յենտրոսոյուզը, Հայաստանում՝ Հայկոոպը) բանվորների մշակած այդ ապրանքը գնում է վոչ թե վաճառականից, այլ հենց գործարանից կամ մի քանի նման գործարանների միությունից, վոր տրեսա է կոչվում: Սպառողական կոոպերատիվների կենտրոնական միությունը գործարանից կամ տրեսայից գնած այդ ապրանքը ծախում է կամ ուղղակի այս կամ այն սպառողական ընկերությանը, կամ սպառողական ընկերությունների գավառական միությանը, վերջինս էլ ծախում է սպառողական խանութին:

Սպառողական ընկերություններ ունեն նույնպես քաղաքի բանվորները և ծառայողները: Բանվորների և ծառայողների սպառողական խանութը կոոպերատիվների գավառական միությունից կամ համապետական կենտրոնից (Ռուսաստանում՝ Յենտրոսոյուզից, Հայաստանում՝ Հայկոոպից) գնում է գյուղական այն ապրանքները, վոր գյուղի կոոպերատիվը ծախած է լինում կոոպերատիվ կենտրոններին: Շատ անգամ, յերբ այդ հեշտ է և ձեռնաու, գյուղի կոոպերատիվը գյուղի ապրանքները ծախում է քաղաքի կոոպերատիվին և նրանից գնում է գյուղի համար պետքական ապրանքներ: Կոոպերացիան սշխատում է, յերբ հնարավոր է, ապրանք գնել հենց նրանից, ով այդ ապրանքը արտադրում է:

Ուրեմն, քաղաքի բանվոր-սպառողները միանալով իրենց կոոպերատիվի շուրջը, գյուղացի-սպառողները իրենց կոոպերատիվի շուրջը, իրենց այդ կոոպերատիվների միջոցով անտեսապես զոգում, այսինքն միացնում են քաղաքը գյուղի և գյուղը քաղաքի հետ: Քաղաքի ու գյուղի, բանվոր-ծառա-

յողի ու գյուղացու ստեղծած բոլոր սպառողական կոոպերատիվները իրենց կողմից միանում են մի ընդհանուր կենտրոնի շուրջը և այսպիսով կազմում են բանվոր-գյուղացիական մի կոոպերացիա: Հայաստանում բոլոր սպառողական ընկերությունները խմբված են իրենց կենտրոն Հայկոոպի շուրջը: Հայկոոպն ու մյուս խորհրդային հանրապետությունների սպառողական ընկերությունների կենտրոններն էլ ունեն իրենց ամենաընդհանուր, համախորհրդային, համամիության կենտրոնը — Յենտրոսոյուզը (Մոսկովայում), վորը, ինչպես ասացինք, միևնույն ժամանակ ամբողջ խորհրդային Ռուսաստանի սպառողական կոոպերատիվների կենտրոնն է:

Ամեն մի գյուղացի և բանվոր առանձին վերցրած փիչ փող ունեն: Բայց վորովհետև գյուղացիք ու բանվորները շատ շատ են, այդ պատճառով յերբ նրանք միանում են կոոպերացիայի շուրջը և մեջտեղ են բերում իրենց փողերը, ստացվում է մեծ գումար, հասարակական մեծ դրամագլուխ (կապիտալ): Այդ գումարով հեշտ է լինում հենց իրենցից, ապրանք արտադրողներից, մի անգամից շատ ապրանք գնել: Մի անգամից շատ ապրանք գնելը, մյուս կողմից էլ այն, վոր կոոպերատիվների մեջ այդ ապրանքը առանց միջնորդ վաճառականի գյուղացուն տվողը բանվորն է (գործարան, տրեսա), բանվորին ծախողն էլ ելի առանց միջնորդ վաճառականի գյուղացին է, ապրանքի գինը յերկու կողմից էլ դուրս է գալիս չափավոր, ձեռնաու: Գյուղացին չափավոր, արդարացի գնով գյուղի ապրանքը ծախում է բանվորին, բանվորն էլ նույնպես չափավոր, արդարացի գնով քաղաքի ապրանքը ծախում է գյուղացուն: Գյուղացու և բանվորի միջև չկա կանգնած միջնորդ վաճառականը, այդ պատճառով էլ կոոպերացիան արդարացի գներով միացնում է միմյանց յեղբայրակից գյուղացու և բանվորի ձեռքերը:

3. Ո՞Վ Ե ԿՈՈՊԵՐԱՅԻՄԱՅԻ ԹՇՆԱՄԻՆ

Դեհ, առեւ ե, պարզ ե, վոր կոոպերացիան ե գյուղի ժանր ու խոշոր սպեկուլյանտի և վաշխառուի (բռունցքի, կուլակի), քաղաքի առևտրականի ու կապիտալիստի մահացու թշնամին:

Ինչո՞ւ յե այսպես: Ի՞նչ ե սրա պատճառը: Այն, վոր ինչքան ուժեղ ե կոոպերացիան, նույնքան ամուր ե խորհրդային անտեսությունը, նույնքան ամուր ե բանվորների և գյուղացիների իշխանությունը, նույնքան հեշտ կապրի բանվորը, նույնքան հեշտությամբ կարող ե կարգի բերել իր անտեսությունը և ապրել գյուղացին: Կոոպերացիայի ուժեղացման գեպքում կարիք չի լինի վաշխառուի և առևտրականի ճորտ գառնալու:

Վորքան ամուր ու հաստատուն ե կոոպերացիան, այնքան վատ ե վաշխառուի, խանութպանի և խոշոր վաճառականի դրությունը, այնքան քիչ ե նրանց ույժը, պակաս ե նրանց վատտակը, այնքան կորչում ե նրանց այն համոզմունքը, թե կկատարվի նրանց նվիրական ցանկությունը, նրանց այն բաղձանքը, վոր այսպիսի խոսքերով են հայտնում. «Ա՛խ, ի՞նչ լավ, ի՞նչ բախտավորություն կլինեի, յեթե հրաշք պատահեր և գետի ջուրը հակառակ հոսանքով սկսեր գնալ, յեթե խորհրդային իշխանությունը վերջանար և ելի գար ցարի իշխանությունը, վորը հարուստներիս իշխանությունն ե. ա՛խ, պիտի լինի՞, վոր այդ յերանելի ժամանակները զան ու աշխարհը կառավարենք մենք, մաքուր հարուստներս, և վոչ թե այս մշտտ ու կոշտ-կոպիտ բանվորն ու գյուղացին»:

Ի հարկե, գետի ջուրը յետ չի գնա, և հարուստների իշխանությունը յետ չի գա: Բայց վաշխառուն, խանութպանը և վաճառականը խորամանկությամբ աշխատում են կոոպերացիայի տակը հոր փորել և այս ճանապարհով բանվորների ու գյուղացիների վզին նստել, նրանց կաշին քեր-

թել: Այս պատճառով այդ հին գայլերն են կոոպերացիայի կատաղի թշնամիները, և նրանցից ե, վոր կոոպերացիան պետք ե զգուշանա: Իսկ զգուշանալ այս դեպքում նշանակում ե ուժեղ լինել: Յերբ կոոպերացիան ուժեղ յեղավ, նրա թշնամիները—վաշխառուն, խանութպանը և խոշոր վաճառականը կթուլանան և առամ չեն ունենա կծելու կոոպերացիային:

4. ԲՍՅԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՅ ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ ԿԱՆ ՅԵՎ ՆՐԱՆՅԻՑ Ի՞ՆՉ ՈԳՈՒՏ ՈՒՆԻ ԲԱՆՎՈՐ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻ ՄԱՐԿԸ

Սպառողական ընկերությունները բանվորի ու գյուղացու ձեռքում կարող են դառնալ շատ մեծ շինարար ույժ:

Բայց միայն առևտրով չե, վորով զբաղվում են գյուղական և զործարանային կոոպերատիվներում: Կոոպերատիվ միացումները (անդամներին միացնող կազմակերպությունները) զանազան տեսակի յեն լինում: Ահա, որինակի համար, պատերազմի և սովի տարիներում սաստիկ քայքայվել ե գյուղացիական անտեսությունը: Շատ փող ե պետք, վոր նա, ինչպես հարկն ե, կարգի բնկնի: Պետք ե փող պարտք վերցնել: Խո՛ւ չի կարելի պարտքի համար վաշխառուին դիմել: Նա իրենից պարտք վերցնողին դատեցնելով և տոկոսներով նրա կաշին կքերթե: Այդպիսի պարտքով փոշինչ կարգի չես կարող բերել: Այդպիսի պարտքը գյուղացու համար խեղդվելու թոկ կդառնա: Վաշխառուն մարդու այնպիսի խաթի մեջ կզցե, վոր հոգին դուրս կգա: Ուրեմն գյուղացին իր ցավին ի՞նչ ճար պիտի անե:

5. ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՄ

Գյուղացու այդ ցավին ճար անելու համար խորհրդային իշխանությունը կազմակերպել ե վարկային կոոպերացիա, իսկ այդպիսի կազմակերպությունը կոչվում ե

վարկային կոոպերատիվ: Վարկային կոոպերատիվի անդամ զարձողը և փայավճար տվողը, հենց վոր կարիք ունեցավ, կարող է վարկային կոոպերատիվից ցածր տոկոսներով փոխառություն ստանալ և մաս-մաս իր վերցրած պարտքը վերագարձնել: Նայած թե վարկային կոոպերատիվը վորքան ազատ միջոցներ ունի, համաձայն դրան ել նա նշանակում է պարտքը վերագարձնելու ժամանակը: Վարկային կոոպերատիվները փոխառություն են տալիս յերբեմն յերեք, լինում է նույնիսկ հինգ և ավելի տարիներով:

Գյուղացուն հարմարություն տալու համար շատ գյուղական սպառողական ընկերություններ ունենում են վարկային բաժիններ, վորոնք ընդունում են անդամներից հատուկ փայավճար: Յերը գյուղացին փողի կարիք է ունենում իր տնտեսության պետքերի համար (անասունների, գյուղատնտեսական գործիքների, սերմացուի և այլն), նա սպառողական ընկերության վարկային այդ բաժնից փոխառություն է ստանում և ստացած փողը, համաձայն կոոպերատիվի կանոնադրության, անպատճառ ծախսում է այն նպատակի համար, ինչի համար վոր նա վերցրել է այդ պարտքը:

Մեր խորհրդային իշխանությունը պետական փողերից գեռ 1922 թվին հատկացրեց վոսկով 20 միլիոն ռուբլի այն նպատակով, վոր կոոպերատիվները այդ փողով ոգնեն գյուղացիներին նրանց տնտեսությունները ուժեղացնելու համար: Ի հարկե, կոոպերատիվները գյուղացիներին այդ փողից պարտք են տալիս շատ չափավոր տոկոսներով, և վոչ թե ձրի յեն բաժանում փողը: Պարտքը այնքան ժամանակով են տալիս, վոր գյուղացին կարողանա իրեն քիչ վոտքի կանգնեցնել ու հետո պարտքը տալ: Խորհրդային իշխանությունը այս 20 միլ. ռուբլին տվեց այն նպատակով, վոր գյուղացին հեշտությամբ կարողանա պարտք վեր-

ցնել իր տնտեսությունը կարգի բերելու համար և չընկնի պարտքի համար վաշխառուի ուխտ:

Գյուղացու տնտեսությունը ուժեղացնելու նպատակով տրված այդ 20 միլ. ռուբլու ֆոնդը (հատուկ գումարը) խորհրդային իշխանությունը այժմ ավելացրել և մեծացրել է ելի մի քանի տասնյակ միլլիոն վոսկե ռուբլիներով:

Խորհրդային իշխանությունը գյուղատնտեսության ոգնության համար այդ տասնյակ միլլիոնները փոխարինարար գյուղացիներին է տալիս, ինչպես տեսանք, վարկային ընկերությունների և սպառողական ընկերությունների վարկային բաժինների, ինչպես և առանձին գյուղատնտեսական ընկերությունների միջոցով: Այդ ֆոնդերը (գյուղատնտեսության ոգնության հատուկ գումարները) գրտնրվում են գյուղատնտեսական բանկերում և շատ տեղերում հիմնվող գյուղատնտեսական վարկի ընկերություններին մեջ (Հայաստանի գյուղատնտեսական բանկը գյուղատնտեսական վարկի ընկերության նման մի հիմնարկություն է), վորոնց անդամ կարող են գրվել թե հիտնարկությունները, թե առանձին գյուղացիք: Վարկային կոոպերատիվները, վարկային բաժինները և գյուղատնտեսական ընկերությունները գյուղացիներին պարտք տալու համար փող վերցնում են այդ գյուղատնտեսական բանկերից և գյուղատնտեսական վարկի ընկերություններից:

Այսպիսով, տեսնում ենք, վոր գյուղատնտեսական բանկերի, գյուղատնտեսական վարկի ընկերությունների և սրանց հետ կապված վարկային ընկերությունների, վարկային բաժինների և գյուղատնտեսական ընկերությունների միջոցով խորհրդային իշխանությունը միլլիոններ է պարտք տալիս գյուղացիության: Բայց խորհրդային իշխանության տվածը չի կարող բավականացնել գյուղացու կարիքներին: Պետք է գյուղացին ինքն ել աշխատի, վոր վարկային կոոպերատիվները և վարկային բաժինները շատ փող ունե-

հան կարիք ունեցողներին պարտք տալու համար: Մեղա-
նից ամեն մեկը գիտե, վոր գյուղացու գրպանում շատ
անգամ ավելորդ փող է լինում, վոր անոգուտ պառկում
է կամ գյուղացու գրպանում, կամ նրա սնդուկում: Ահա
այդ փողն է, վոր գյուղացին պետք է պահէ վոչ թե իր
գրպանում կամ սնդուկում, այլ իր մոտի վարկային կո-
ոպերատիվում: Վարկային կոոպերատիվը վոչ միայն ան-
կորուստ կը պահէ այդ փողը, այլ և նրա համար կտա
վորուշ, չափավոր տոկոս: Ինքը, փող պահ տվողը, իհարկե,
պետք է վարկային ընկերութեան անդամ լինի: Յերբ նրան
իր փողը հարկավոր յեղավ, այն ժամանակ ել կատանա:
Միայն վարկային կոոպերատիվին փող պահ տվողը (այդ-
պիսի փողը կոչվում է ավանդ) պետք է հայտնէ
կոոպերատիվին, թե ինչ պայմանով է ավանդը մըտ-
ցնում վարկային կոոպերատիվը, վորպեսզի կոոպե-
րատիվի վարչութիւնը իր հաշիվը լավ գիտենա—գիտե-
նա, թե յերբ ինչքան փող պետք է ունենա սրան կամ
նրան ավանդը ժամանակին տալու համար:

Այսպիսով, վարկային ընկերութեան մեջ միմյանց հան-
գիպում են յերկու գյուղացի, մեկը, վոր ավելորդ փող ու-
նի, և մյուսը, վոր փողի կարիք ունի: Վարկային կոոպե-
րատիվի միջոցով փող ունեցող գյուղացու ավելորդ փողը
պարտք է տրվում փող չունեցողին, վորը մաս-մաս, կա-
մաց-կամաց կվերագարձնի ընկերութեանը իր վերցրած
պարտքը և այդ պարտքի համար չափավոր տոկոսները:
Այս ճանապարհով, մի կողմից, փող պարտք տվող (ավանդ
մտցնող) գյուղացու փողը անկորուստ կմնա և քիչ էլ կա-
վելանա չափավոր տոկոսներով, մյուս կողմից էլ, փողի
կարիք ունեցող գյուղացին կարգի կբերի իր անտեսու-
թիւնը, վորքի կկանգնի և վոչ թե կընկնի վաշխառուի
ճանկը, կգտնա նրա ճորտը:

Վարկային կոոպերատիվները զբաղվում են նույնպէս
գյուղացու ավելցուկ հացը, յուղը, պանիրը, մեղրը, բուրդը,

խաղողը և այլ ապրանքները ձեռնտու գներով վաճառա-
հանելով (ծախելով): Վարկային կոոպերատիվները գյուղա-
ցու այդ ապրանքները ծախելով չեն բավականանում,—նրանք
գրսից, ելի ձեռնտու, մատչելի գներով, գյուղացու համար
բերում են գյուղատնտեսական գործիքներ, գնում են ա-
նասուններ, սերմացու, վնասատուներին վոչնչացնող մի-
ջոցներ և, առհասարակ, այն ամենը, ինչ հարկավոր է
գյուղացուն նրա անտեսութիւնը ուժեղացնելու համար:
Ինչպէս տեսանք, գյուղացիների ծախու ապրանքները վա-
ճառահանում և նրա համար գրսից ապրանքներ գնում է
նույնպէս սպառողական ընկերութիւնը: Սպառողական
ընկերութիւնը գյուղի համար գնում է գլխավորապէս
մարդու սպառողական պետքերի համար առարկաներ (կտո-
րեղեն, նավթ, աղ, լուցկի և այլն), իսկ վարկայինը գյուղի
անտեսութեան համար պետքական առարկաներ (անասուն-
ներ, գործիքներ, սերմացու, վնասատուների դեմ միջոցներ
և այլն):

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՎ.

Գյուղատնտեսական կոոպերացիան ել զբաղվում է
այն հարցով, թե ինչպէս ոգնել գյուղացուն իր անտեսու-
թիւնը ավելի լավացնելու համար: Որինակ, լսել են գյու-
ղացիք, վոր այս ինչ գնով կարելի յէ ձեռք բերել կալսիչ
մեքենա, վորը ավելի մաքուր յէ ձեռնում հացը և ավելի
լավ է ջուկում հատիկը, քան այդ բանը գյուղացիք անում
են հացը կամով ձեռնելու: Կալսիչ մեքենան առանձին է
դուրս բերում ուտելու հացը, առանձին սերմացուն, սեր-
մացուն լինում է խոշոր, ծանր, լիքը հատիկներից և մա-
քուր (խարճոտ չէ): Գյուղացու սիրտը ուզում է գնել
կալսիչ մեքենան, բայց նա թանգ է, մի մարդու ուշից
վեր է գնելը:

Բայց այն, ինչ մեկի ուշից վեր է, վեր չէ միասին,
միացած աշխատանքով գործող շատերի ուշից: Անձրևի

մի կաթիլը արտ չի ջրի, բայց յերբ այդ մի կաթիլին միանում են միլլիոնավոր, անթիվ կաթիլներ, անձրեւը ջրում և կանաչեցնում է վոշ թե մի արտ, այլ շատ արտեր, ամբողջ դաշտեր ու յերկրներ։ Այս ճշմարտությունը ավելի լավ գիտե հենց ինքը գյուղացին։ Ահա հավաքվում են համագյուղացիք և կազմում են մեքենաներ զբնող ընկերություն։ Մտցնում են փայավճարները և ընկերությունը մտցնում են գյուղատնտեսական ընկերությունների կենտրոնի ցուցակի մեջ։ Հայաստանում այդ կենտրոնը Յերևանումն է և կոչվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների կենտրոն, մի խոսքով՝ Հայգյուղկոոպ (Ռուսաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի կենտրոնը Մոսկվայումն է և կոչվում է Մեխկոոպոլ)։ Հայգյուղկոոպի ոգնությամբ նոր կազմված ընկերությունը գնում է Հայաստանում կամ բերում է Մոսկվայից կամ այլ տեղից (Թիֆլիսից, Ռոստովից և այլն) մի կալսիչ մեքենա, յերբեմն ել յերկուսը։ Մեքենայից թե իրենք են ոգտվում, նոր կազմված մեքենաներ գնող ընկերության անդամները, և թե չափավոր վարձով նրանք տալիս են ոգտվելու իրենց հարևաններին։ Մեկ էլ տեսնում ես, կալսիչ մեքենայի համը առած գյուղացիք, պարզ է, ելի ընդհանուր ուլթերով, գնեցին նույնպես ցանիչ մեքենա։ Յանիչ մեքենայի շնորհիվ սերմացուն ցանվում է հավասար և վոշ թե արտի մի տեղը չափազանց շատ է սերմացու ընկնում, մի ուրիշ տեղ չափազանց քիչ է ընկնում, իսկ յերրորդ տեղը բոլորովին սերմացուի յերես չի տեսնում, մնում է առանց սերմացուի։ Գալիս է արտի հասնելու ժամանակը։ Տեսնում ես, վոր ցանիչ մեքենայով ցանելը դուր չի անցել, — ահա հասկը հասկի մոտ հավասար է դուրս յեկել և վոշ թե անկանոն կերպով մի քանիսը մի տեղ են, մյուսները մի արշին հեռու։

Գյուղացին, մեքենայով ցանելու պատճառով, քիչ սերմացու գործածեց, — վաստակ ունեցավ սերմացու խնայե-

լուց։ Բերքն էլ լավ ցանելու պատճառով լավ դուրս յեկավ։ Մեքենայի ոգուտը գյուղացիք իրենց աչքով տեսան, ուստի վճռում են մի ուրիշ մեքենա ել ձեռք գցել, — հնձիչ մեքենա։ Ձեն բավականանում այս ամենով, — մտածում են արդեն արաքտորի մասին։ Նրանց որինակը տեսնելով՝ հարևան գյուղացիք նույնն են անում, — մեքենաներ գնող ու գործածող ընկերության անդամ են գրվում։ Ձեռք են բերում բազմախով (մի քանի խով ունեցող) գութաններ, գերանդիներ, ձեռքի ցանիչներ։

Գյուղացիք նույնպես ընկերություններ են կազմում ազնվացեղ, այսինքն լավ տեսակի թռչուններ ունենալու համար։

Խորհրդային յերկրներից ելի սկսում են արտասահման ձու տանել ծախելու։ Ձվի գինը բարձրանում է։ Տնային թռչունները պատերազմի և սովի տարիներին քչացել են, տեսակներն էլ վատացել, ինչպես ասում են, այլասերվել են։ Հավերը առաջվա չափ չեն ածում, նրանց ձվերն էլ այժմ մանր, թեթև են։

Ահա կազմակերպվում է թռչնաբույծների ընկերություն։ Նա բերել է տալիս ցեղային, լավ տեսակի հավեր, արաղաղներ, ընտիր, ցեղային ձվեր, վոր դուրս գան լավ, ածան հավեր։ Այս գործի մեջ գյուղացիների կազմած թռչնաբուծական ընկերությանը կոգնե գյուղատնտեսական կոոպերացիան (Հայգյուղկոոպը), — նա կտա հրահանգիչներ։ Այդ հրահանգիչներից թռչնաբուծական ընկերության անդամները կիմանան, թե ուրիշ յերկրներում գյուղացիք ինչպես սովորեցին լավ տեսակի թռչուններ դուրս բերել ու կերակրել, նրանց տեսակը լավացնել։ Իրենք, մեր գյուղացիք էլ, կսկսեն այդ կարգերը մտցնել, վոր լավ թռչուններ ստանան։ Հարևաններն էլ սկսում են նրանց որինակին հետեւել։ Այս բանը իրենց էլ է ոգուտ տալիս, իրենց տնտեսություններին էլ։ Արտասահմանում լավ գնով

ծախելու համար համ հավ կլինի, համ ել ձվեր: Սրանից ոգուտ ու ոգնութիւն կստանա գյուղացին ել, պետութիւնն ել:

Ձե՛ վոր այժմ ցարի ժամանակները չեն: Ուժեղ ե գյուղացին, ուժեղացել ե բանվորը, — նշանակում ե՝ ավելի հարուստ, ավելի ուժեղ ե նույնպէս բանվորա-գյուղացիական պետութիւնը, վորը հենց այդ բանվորներից ու գյուղացիներից ել կազմված ե: Մենք արտասահման ենք տանում ծախելու համար այն, ինչ ավելանում ե մեր պետքերը հագալուց հետո (մեր ավելցուկը): Ինչքան շատ ապրանք ծախենք արտասահմանում, այնքան շատ այնտեղից կարող ենք բերել մեզ հարկավոր գյուղատնտեսական մեքենաներ ե մեքենաների մասեր մեր գործարանների (ֆաբրիկաների) ու գործատուների (գավոզների) համար:

Այդ մեքենաները ավելի կհարստացնեն գյուղացուն, բանվորին ե ամբողջ բանվորա-գյուղացիական իշխանութիւնը: Գյուղացու ե բանվորի կյանքը ավելի լավ, ավելի բախտավոր կգառնա:

Գյուղատնտեսական կոոպերացիան այս ձևով կազմակերպում ե նույնպէս այլ անսակի ընկերութիւններ, — վոչ-խորարույժների, խողարույժների, բամբակագործների, այգեգործների, մեղվարույժների, շերամապահների ե այլ ընկերութիւններ:

Շատ տարածված ե ոգտակար են կաթնատնտեսական ընկերութիւնները (արտելները): Ընդհանուր ուշաբերով գնում են այդ ընկերութեան (արտելի) անդամները սեր-գառներ (սեպարատորներ) ու ուրիշ գործիքներ ե պատ-րաստում են իրենց ընդհանուր գործարաններում յուղ, կարագ, պանիր ե այլ մթերքներ: Ընդհանուր ուշաբերով ընկերութիւնը այս ամենը պատրաստում ե ե ծախում, տալով ամեն մի անդամին նրան հասանելի փողը: Կաթնատնտեսական արտելները լավ տեսակի ապրանք ստանալու հա-

մար հետևում են, վոր իրենց անդամների, դիցուք, կովերը լավ տեսակի լինեն ե լավ կերակրվեն: Այդ պատճառով կաթնատնտեսական արտելները լավացում են իրենց անդամների կթման անասունների տեսակը:

7. ՏՆԱՅՆԱ.-ԱՐԷԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՍ.

Թե խորհրդային մյուս հանրապետութիւններին մեջ ե թե Հայաստանում գյուղացիութեան բավականին մեծ մասը զբաղվում ե նույնպէս վոչխորապահութեամբ: Հայաստանում շատ վոչխարներ են պահում մանավանդ լեռնային շրջաններում: Վոչխոր պահողները ունենում են շատ բուրդ: Այդ բրդից Հայաստանի գյուղացիք տեսակ-տեսակ առարկաներ են պատրաստում: Բրդից գործում են տեղական շալ, գորգեր, կապերտներ, թաղիքներ (քեչաներ), գուլպաներ ե այլն: Այդ առարկաներից գյուղացիք շատ անգամ այնքան շատ են պատրաստում, վոր վոչ միայն իրենց պետքերին են գործածում, այլ ե ծախում են: Գյուղացիների գործած այդ ապրանքները չնչին գնով նրանց ձեռքից առնում ե առևտրականը ե ծախում ե պետք ունեցողներին թանգ գնով: Պատահում ե ե այնպէս, վոր գյուղացին, որինակի համար, աղքատ գեղջկուհին ինքը բուրդ չի ունենում առարկաներ գործելու համար ե կամ քիչ բուրդ ե ունենում: Առևտրականը այդ դեպքում աղքատ կնոջ ձեռքից նրա յերկար որերի, գուցե ե ամիսների գործը (որինակ գորգը) չնչին գնով գնում ե վոչ թե փողով, այլ հում նյութով, բրդով: Այսպիսով, գյուղացու տանը գործած, ինչպէս ասում են, տնայնագործական ապրանքները այսպէս ծախվելով վոչ թե տնայնագործ տղամարդու կամ կնոջ գրութիւնն են լավացում, այլ առանց այն ել հարուստ առևտրականին են հարստացնում:

Առևտրականը շահագործում ե վոչ միայն գյուղի տը-նայնագործին, այլ ե քաղաքի տնայնագործին ու արհեստագործին: Քաղաքում վերցնենք ժանեկագործ (ժանյակ,

հաշիւա պատրաստող, — հաշիւագործ) կանանց, վոր, նստած իրենց տանը, որերով աչք են կուրացնում այդ աշխատանքի վրա: Ժանյակները պատրաստ են: Պետք է ծախել: Ժանեկագործ կինը չի կարող գործը թողնել, վերցնել իր ապրանքը և ման ածել իր քաղաքում: Շատ անգամ ել այնպես է պատահում, վոր ժանեկագործի ապրանքը պետք է ծախել վոչ թե այդ քաղաքում, այլ ուրիշ քաղաքներում, գուցե և ուրիշ յերկրներում: Պատահում են այնպիսի շնորհալի ժանյակներ, վոր կարող են վաճառվել նույնպես արտասահմանում: Խոմ չի կարող ժանեկագործ կինը իր աւեղը թողնել, վերցնել իր ապրանքը, ընկնել իր քաղաքի փողոցները այդ ապրանքը ծախելու համար կամ գնալ ուրիշ քաղաքներ, նույն իսկ ուրիշ յերկրներ ապրանքը վաճառելու համար: Ահա այստեղ ել ելի մեջ է զալիս առևտրականը, չնչին գնով վերցնում է խեղճ կնոջ մեծ աշխատանքի արդյունքը և լավ գնով ծախում է պետք ունեցողներին այդ քաղաքում կամ գրսում: Ավելի սովորական է այն, վոր մի առևտրականը այդ ապրանքը ծախում է մի ուրիշ վաճառականի, սա ել յերրորդին, գուցե յերրորդը շորրորդին, մինչև վոր ապրանքը ընկնում է այն մարդու ձեռքը, վորը նրան գնում է վոչ թե ծախելու, այլ գործածելու համար: Այսպիսով աղքատ կինը իր յերեխաների հետ միասին մնում է աղքատ և հազիվ է սև հաց ձեռք բերում, մինչդեռ նրա գործած սքանչելի ձեռագործը հարստացնում և չաղացնում է առանց այն ել հարուստ ու չաղ վաճառական-միջնորդներին: Նույն բանը պետք է ասել նույնպես մեր արհեստագործների մասին, որինակ, հայտնի հայ վոսկերիչների մասին: Սրանց ել գեղեցիկ գործվածքները ոգուտ են բերում ավելի միջնորդ-վաճառականներին, քան այդ գործվածքները պատրաստող արհեստավորներին: Հայ վոսկերիչների շինած առևտրականները յերբեմն հասնում են արտասահմանյան հեռավոր յերկիր-

ները, բայց ինչ ոգուտ, վոր այդ առևտրականները պատրաստող վոսկերիչները մնում են աղքատ, իսկ հարստանում են ելի բազմաթիվ միջնորդները: Միջնորդները շատ անգամ ոտար յերկրներում նույն իսկ թագցնում են վոսկերիչների տեղը և անունները, վոր գնողները չկարողանան նրանց գտնել և նրանցից անմիջապես աղբանդ գնել: Այսպիսով, միջնորդ-վաճառականը ինչպես վոսկերիչներից, այնպես և ժանեկագործներից, գորգագործներից և ուրիշ անայնագործ-արհեստագործներից խլում է վոչ միայն նրանց վաստակը, այլ և նրանց անունը, նրանց հոչակը, այդ հըռչակը թագցնելով և վերագրելով շատ անգամ չեղած մարդկանց ու տեղերի:

Միջնորդ-վաճառականը, ինչպես տեսանք, աղքատ անայնագործին և արհեստագործին հաճախ իր ցանցի մեջ է գցում և այդտեղ է սլահում յերկար ժամանակ այն պատճառով, վոր նա նրանց ապրանքի դիմաց նրանց տալիս է հում նյութեր, բուրդ, թել, վոսկի և այլն: Անոգնական կին-անայնագործը և արհեստագործը վոչ միայն շահագործվում են միջնորդ-առևտրականների կողմից, այլ և շատ անգամ ստիպված են իրենց շահագործողների վրա նայել իբրև իրենց բարերարների վրա, — չե՞ վոր նրանցից են ստանում հում նյութեր: Խեղճերը մոռանում են, շատ անգամ ել չգիտեն, վոր մի 10—15 ուրբուտ հում նյութի դիմաց միջնորդ-վաճառականը նրանցից ստանում է ոգուտ վոչ թե 10—15 ուրբուտ, այլ մի քանի անգամ ավելի: Իսկ յեթե հիշենք, վոր միջնորդը մեկ չէ, այն ժամանակ կրտսնենք, վոր անայնագործին և արհեստագործին դիցուք 10—15 ուրբուտ տվող գործը միջնորդների շարանին շատ անգամ տալիս է 50, 60 ուրբի, յերբմն ել ավելի ոգուտ:

Ի՞նչպես անել, վոր անայնագործները և արհեստագործները իրենց աշխատանքի տերը դառնան, միջնորդ-ներին ճանկերը չընկնեն և չշահագործվեն:

Այս դեպքում ել փրկությունը կոտպերացիայի մեջ է։ Ամեն տեսակի արհեստ ունեցող տնայնագործները և արհեստագործները պետք է միանան և կազմեն այդ արհեստի կոտպերացիայի ընկերություն, — արտել։

Պետք է կազմակերպել դյուղերում գորգագործների, շալագործների և այլ արտելներ, քաղաքներում՝ ժանեկագործների (հաշիագործների), գուլպա գործողների, դերձակների, լվացարարների, կոշկակարների, փոսկերիչների, սափրիչների և ուրիշ նման արտելներ։ Այդպիսի արտելներ խորհրդային Ռուսաստանում շատ կան, և նրանք ունեն իրենց ընդհանուր կենտրոնը։ Հայաստանում ել արդեն կազմակերպվել են և քանի գնում շատ են կազմակերպվում այդպիսի արտելներ։ Խորհրդային իշխանությունը և կոտպերացիան Հայաստանում ստեղծում են այդ արտելների համար առանձին կենտրոն։ Այդ կենտրոնի հրահանգիչները արտել կազմակերպելու ցանկություն ունեցողներին կոպեն, վոր նրանց արտելի գործը գլուխ դա։

Կանանց արտելներ կազմակերպելու ժամանակ անհրաժեշտ է դիմել Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյին կից գործող կինբաժնին և գավառային կինբաժիններին։ Կինբաժինները իրենց փորձառությունը ու խորհուրդներով կոպեն աշխատավոր կանանց, վոր նրանք շուտով կարողանան արտել կազմակերպել ու այսպիսով կոտպերացիայի միջոցով իրենց շահերը պաշտպանել։

Ի՞նչ ոգուտ են տալիս այդ արտելները։ Նախ, այն, վոր նրանք միացնում են միևնույն գործով պարագողներին մի տեղում։ Իսկ հայտնի չե, վոր միացած ուժերով մի գործ ավելի լավ կարելի չե կատարել, քան յերբ մարդիկ առանձին-առանձին են գործում։ Յեթե, որինակի համար, փոսկերիչները կամ գորգագործները միացած են, նրանք կարող կլինեն ավելի լավ տեսակի գործիքներ ձեռք բերել, հում նյութ ստանալ։ Միությունը, արտելը, ավելի

միջոցներ ունի, ուրեմն և ավելի կատարելագործված գործիքներ կարող է ձեռք բերել։ Արտելը հիմնարկություն է, իսկ հիմնարկությունը ավելի կարող է ապրանքի լավ ու վատը ջոկել իր մասնագետների, այս կամ այն գործի վարպետի միջոցով։ Յերկրորդ, արտելը վարկ կարող է ունենալ բանկերում և հիմնարկներում (կոտպերացիայում և այլն)։ Այս ամենամեծ հարմարություններից միսն է, վոր արտելը տալիս է իր անդամներին։

Առանձին տնայնագործ-արհեստագործը բանկերից և հիմնարկներից պարտք չի կարող վերցնել։ Նա չնչին պարտք կարող է փողով կամ ապրանքով ստանալ միջնորդ առևտրականից, վորը այդ պարտքի դիմաց տնայնագործի և արհեստագործի ապրանքի տեղ ու տիրական է դառնում, նրանց կաշին է քերթում։ Արտելը ազատում է տնայնագործին յսկ արհեստագործին մասնավոր վաճառականի ծորտը լինելուց։ Արտելը կոշկակարին կաշի կտա, գորգագործին՝ բուրդ և թել, փոսկերչին՝ մետաղներ և այլն։ Այլևս մենք չենք խոսում այն արտունությունների մասին, վոր որենքը տալիս է կոտպերատիվներին, վորոնց թվում է արտելներին։ Վերջապես, ամենագլխավորը, արտելը իր ապրանքը կծախե փոշ թե միջնորդ-վաճառականին, այլ այդ ապրանքի կարիք ունեցողին, սպառողին։ Արտելի, արտագործի և սպառողի միջև միջնորդ-վաճառականների սլառը կվերանա։ Դեմ առ դեմ իրար հանդեպ կգան, իրար յերես կտեսնեն ապրանք պատրաստողը և այդ ապրանքի կարիք ունեցողը։ Այս պատճառով թե արտելի անդամը ավելի ոգուտ կունենա, — նրա ապրանքը ավելի լավ գնով կծախվի, թե այդ ապրանքի պետք ունեցողը, — նա ել ապրանքը ավելի եժան գնով կգնե։ Արտելը բազմաթիվ միջնորդ-վաճառականների ստացած ոգուտի մի մասը կթողնի արհեստավորի գրպանում, մյուս մասը՝ արհեստավորի ապրանքը պետք ունեցողի գրպանում։ Այս պատճառով, արտելը շահա-

վետ ե թե արհեստավորի և թե սպառողի, ապրանքը գործածելու համար գնողի համար: Հարկը պահանջած գեպում արտելը իր անգամների արտադրած ապրանքները կոոպերատիվ կենտրոնների միջոցով կարող ե ծախելու ուղարկել շատ հեռավոր յերկրներ (գորգերը, փոսկերիչները գործվածքները, ժանյակները և այլն) և փոխարենը այնտեղից ստանալ պետքական ապրանքներ արտելի գործադրության համար, որինակ, նուրը թելեր և այլն: Կոոպերացիան այս դեպքում հանդես ե գալիս իբրև միջնորդ, բայց այդ միջնորդը բոլորովին նման չե միջնորդառևտրականին: Կոոպերացիան (իր կազմակերպվող կենտրոնը, Հայկոոպը և Հայգյուղկոոպը) միջնորդության համար վերցնում ե չնչին գումար իր ծախսերը ծածկելու համար, — մի քանի տոկոս, նայած ապրանքին: Ուրիշ կերպ չի ել կարող լինել, քանի վոր նույն այդ կոոպերացիան ընտրողները բոլոր կոոպերատիվները և արտելներն են: Հետևաբար, կոոպերացիայի նպատակն ե ծառայել իր անդամների, կոոպերատիվների և արտելների շահերին, և վոչ թե տնայնագործներին և արհեստագործներին շահագործել, ինչպես այդ արել ե շարունակ և ղեռ շարունակում ե վորոշ չափով և այժմ միջնորդառևտրականը: Պորհրդային իշխանությունը թե իր որենքներով և թե իր դրամական ոգնությամբ (վարկով) ամեն կերպ թե ու թիկունք ե տալիս ինչպես բոլոր բանվորներին ու գյուղացիներին, այնպես և նրանց հարազատ տնայնագործին ու արհեստագործին (վարձու աշխատանքից չոգտվող), վոր նրանք ազատվեն մասնավոր առևտրականի ճանկերից, չընկնեն մեծ ու փոքր կապիտալիստների յերախը (ռեխը):

8. ԱՐԿՅՈՒՔ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ

Այս հարցին վերևում քիչ պատասխան ավել ենք: Բայց յեկեք միասին այս հարցի վրա քիչ ավելի մտածենք:

Հարկավոր ե կոոպերացիան գեղջկուհուն: Ի հարկե, հարկավոր ե, այն ել ինչպես հարկավոր: Մի քիչ առաջ մենք խոսեցինք գորգագործ գեղջկուհու մասին: Այստեղ նույնիսկ կույր մարդը տեսնում ե, վոր կոոպերացիան հարկավոր ե գորգագործ գեղջկուհուն, վոր գորգագործուհին պետք ե արհեստագործական արտելի անդամ գրվի և կոպերացիայի միջոցով ծախե իր գործվածքն ու ձեռք բերե հում նյութ (բուրդ, թել): Գորդերը մեծ մասամբ ծախվում են մեծ քաղաքներում և մանավանդ արտասահմանում: Չի կարելի թույլ տալ, վոր այս գործի մեջ ոգուտը ընկնի մասնավոր վաճառականի և վոչ թե գորգագործուհու ձեռքը: Արտելը, կոոպերացիան գորգագործուհուն իր աշխատանքի տերն ե դարձնում: Նույնը պետք ե ասել ժանեկագործների մասին, վորոնց աշխատանքը մինչև որս հարստացրել ե վաճառականներին: Կոոպերացիան ե, վոր կգա այդ միջնորդների հախից: Կոոպերացիան տնայնագործներից և արհեստագործներից նրանց գործվածքները կգնե արդարացի գներով, կծախե ղրսում և այդտեղից նույնպես չափավոր, արդարացի գներով կբերե տնայնագործների համար հում նյութ և հարկավոր գործիքներ: Միջնորդ-վաճառականները մինչև այժմ շահագործել են մանավանդ կին-տնայնագործներին, այդ պատճառով ել մանավանդ գյուղի և քաղաքի տնայնագործ կանայք պետք ե աշխատեն շուտով արտելների մեջ մանել և նրանց միջոցով իրենց գրպանում պահել այն ոգուտը, վորը առանց կոոպերացիայի այժմ մտնում ե միջնորդ-վաճառականի գրպանը:

Նույն բանը պետք ե ասել նույնպես գյուղատնտեսական մթերքների մասին: Միթե գեղջկուհին չե, վոր գյուղում ամենից ավելի աշխատանք ե թափում հավերի, բրմբուլի, յուղի, պանրի և այլ մթերքների վրա: Միթե գեղջկուհին չե, վոր հետևում ե հավերին, հոգ ե տանում հորթ ու գառի մասին, ձմեռվա յերկար գիշերներին բուրդ ե գլում, մանում, գուլալա, գորգ գործում և այլն: Միթե

կինը չէ, վոր աշխատում է յուզ ու պանիր ստանալու գործի վրա: Յեւ միթե կինը չէ, վոր կորուստ է ունենում, յերբ յուզը, պանիրը կամ կարագը վատ, անհամ ու կեղտոտ են դուրս գալիս: Միթե կինը չէ, վորին ամենից ավելի յե սագում գործ ունենալ սերգատի հետ և նրա միջոցով լավ ու մամլած (պրեսի տակ դրած) յուզ ստանալ վոչ միայն տնային գործածութեան, այլ և վաճառելու համար: Միթե կինը չէ, վորին ամենից ավելի յեն հարկավոր գյուղատնտեսի (ազրոնում) խորհուրդները կաթնատու անասուններին նայելու, նրանց կերակրելու և նրանց տեսակը ջոկելու մեջ:

Հենց այս ամենի համար ել կոոպերացիան շատ և շատ է հարկավոր գեղջկուհուն: Գեղջկուհին կոոպերացիայի անգամ դարձավ թե չէ՝ կսկսե իր ծանր աշխատանքի պտուղը քաղել: Նա իր սպառողական ընկերութեան մյուս անդամների հետ միասին կմասնակցե սպառողականի ընդհանուր ժողովներին, բոլորի հետ կքննե և կվճռե հարցերը: Իսկ հարկավոր է խոսել այն մասին, վոր սպառողական կոոպերատիվը հարկավոր է գեղջկուհուն: Գեղջկուհու վրա յե ընկած ամբողջ տունը, ամբողջ տնտեսութեանը: Գեղջկուհին է, վոր ամենից ավելի պետք ունի իմանալու, թե ինչպես է չիթը, — դիմացկուն է, խոմ գույնը չի տալիս: Գեղջկուհին յե, վոր գործ է անում լվացքի համար ոճառ (սապոն), լուսավորութեան համար նավթ: Նրանից են տանեցիք պահանջում կերակրի և անասուններին տալու համար աղ և ալյն: Ապա և նման շատ ապրանքներ գեղջկուհին խոմ չարչուց կամ խանութպանից չի կարող գնել: Սպառողական կոոպերացիան է, վոր ծախում է ալյու ամենը: Ուրեմն գեղջկուհին չի կարող սպառողականի անգամ չլինել և չհետևել, վոր կոոպերատիվը իրեն ու մյուս գեղջկուհիներին համ լավ ու գյուղի համար պետքական ապրանքներ ծախի, համ ել եժան:

Մեզ ու մեզ մի հարց ել տանք: Սյժմ քիչ գեղջկուհիներ կան, վոր իրենք մենակ են դարձնում, կառավարում տունը: Նրանցից շատերի ամուսինները զոհ գնացին համաշխարհային պատերազմին (հարուստների սարքածը, վոր իրենք ոգավեն աշխատավորի արյան գնով) ու քաղաքացիական կռիվներին: Հայաստանում շատ հայ ու թուրք կանայք կան, վորոնց ամուսինները սպանվեցին: Դաշնակների, մենշևիկների ու մուսավաթիստների սարքած ազգամիջյան կռիվների մեջ... Ուրիշ շատ պատճառներով ել գեղջկուհիները շատերը հաճախ դառնում են իրենց տունը և տնտեսութեանը անոնց տղամարդու կառավարողներ: Գեղջկուհու ամուսինը մեռնում է կամ յերկար տալիս երկրով դրսում աշխատում, կամ անբուժելի հիվանդութեան ստանում և ծանրանում կնոջ վրա, կինը հասած վորդիներ չի ունենում և այլն: Այս բոլոր գեպքերում տունը պահելու միակ աշխատավորը դառնում է գեղջկուհին: Ինչպես ամեն մի գեղջուկի (գյուղացի տղամարդ), այնպես և գեղջկուհուն շատ անգամ հարկավոր է լինում փոխառութեան, պարտք վերցնել, ուրիշ խոսքով, գեղջկուհուն ել հարկավոր է վարկային կոոպերացիա:

Այսպիսով, դուրս է գալիս, վոր գեղջկուհուն հարկավոր են կոոպերացիայի բոլոր տեսակներն ել, — թե տնայնապահ տնտեսագործականը (գորգագործական, բրուսների արտեղներ, և այլն), թե գյուղատնտեսականը (կաթնատնտեսական, մեղվաբուծական արտեղներ և այլն), թե սպառողականը և թե վարկայինը: Քաղաքի տնայնագործուն և արհեստագործուն, յերբ նրանք ել գեղջկուհու նման ուրիշներին չեն բանեցնում, հարկավոր են կոոպերացիայի: Այս բոլոր տեսակներն ել, բացի գյուղատնտեսականից: Ասկայն, Հայաստանում կան քաղաքներ, ուր քաղաքի բնակչուհին զլխավորապես գյուղատնտեսութեամբ է պարապում (Նոր-Բայազետ, Եջմիածին, Ղարաբաղի խա և այլն): Ի հարկե, գյուղատնտեսական կոոպերացիան ալգպիսի քաղաքներ

բում նույնպես անելիք ունի, — նա պետք է կադմակերպե տղամարդկանց հետ նույնպես քաղաքի գյուղատնտեսունհիններին գյուղատնտեսական կոոպերատիվներ շուրջը (արտերներ, վարկային կոոպերատիվներ, այգեգործական ընկերություններ և այլն): Կոոպերացիան յեթե հարկավոր է տղամարդուն, նա հարկավոր է մանավանդ կնոջը, փորովհետև մենակ աշխատող և ընտանիքով ծանրաբեռնըված կինը ոգնության ավելի կարիք ունի, քան տղամարդը:

Ձի կարելի ասել, թե կոոպերացիայի վնր տեսակն է ամենից ավելի պետքական. կոոպերացիայի բոլոր տեսակներն են հարկավոր են, — բոլորն են ունեն իրենց տեղը և նշանակութունը: Ամեն մի աշխատավորունի ինքը իր համար ավելի նշանակութուն է տալիս կոոպերացիայի այն տեսակին, վորը ամենից ավելի մոտ է իր կատարած գործին: Բանվորունին իր համար ավելի նշանակութուն է տալիս բանվորական սպառողական կոոպերացիային, ժանեկագործունին՝ իր արտերին, կաթնատնտեսունին՝ կաթնատնտեսական արտերին, գորգագործունին՝ գորգագործունիների արտերին և այլն: Բայց կա կոոպերացիայի մի տեսակը, վորը բոլոր՝ գեջկուհիներին, բանվորունիներին և տնայնագործունիներին են պետք է, — այդ սպառողական կոոպերացիան է: Բոլոր աշխատավորունիներն են, ինչպես և աշխատավորները, իրենց շրջանի, իրենց տեղի սպառողական ընկերության անգամ պետք է գրվեն: Ո՞ւմ հարկավոր է հաց, չիթ, աղ, նավթ, լուցկի, միս, ձու, ամանեղեն և այլն: Աշխարհում մարդ չկա, վոր այդ ամենի կարիքը չունենա: Այդ պատճառով ել բոլոր բանվորունիները, գեջկուհիները և տնայնագործունիները պետք է վորեն սպառողականի անդամ լինեն, թե չե նրանք կմնան խանութպանի գատաստանին, կընկնեն նրա ճանկը, իսկ խանութպանը, մեծ ու փոքր, միևնույն է, վոչ մի աշխատավորունու կաշին չի խնայում:

Սպառողական ընկերությունների նշանակութունը մեծ է վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում: Սպառողական խանութը գյուղին վոչ միայն տալիս է եթան և լավ ապրանք, այլ և գյուղի ապրանքը գնում և ծախում է զրոում, շատ անգամ արտասահմանում, ինչպես և այդ անում է գյուղատնտեսական կոոպերացիան: Այսպես, Ռուսաստանի հացը միլիոնավոր փթերով գնում է ծախվելու արտասահմանյան յերկրները: Նույնպես Խորհրդային Միության, ուրեմն և Հայաստանի, հացը, ձուն և ուրիշ նման գյուղացիական ապրանքներ ծախվում են ինչպես Խորհրդային յերկրներում, այնպես և սկսում են տարվել ծախվելու դուրսը:

Գյուղատնտեսական կոոպերացիայի հետ միասին նույնպես սպառողական կոոպերացիան այս մթերքները վերցնում է գյուղից և տանում է ծախելու Խորհրդային և արտասահմանյան այն յերկրներում, ուր այդ մթերքների պետք ունեն մարդիկ: Ի հարկե, Խորհրդային հանրապետությունները ամենից առաջ բավարարում են (բավականացնում են) Խորհրդային յերկրների կարիքները և հետո ավելցուկը տանում արտասահման ծախելու:

Ինչպես գյուղատնտեսական կոոպերացիան, այնպես և սպառողականը գյուղացիներից այս ապրանքները գնում է չափավոր, արդարացի գներով: Յեթե, ասենք, յուղը, ձուն լավ գնով ծախվեց, այն ժամանակ կոոպերացիան ապրանքը իրեն տվող գյուղացիներին տալիս է լրացուցիչ գին: Այսպիսով, նայած պայմանին, գյուղացին միշտ կարող է հույս ունենալ, վոր, բացի իր ստացած արգարացի գնից, մի բան ել կստանա այն ժամանակ, յերբ կոոպերացիան ապրանքը կծախե:

Ինչպես գյուղատնտեսական, այնպես և սպառողական կոոպերացիան գյուղացու ծախված ապրանքների դիմաց, յեթե գյուղացիք կարիք ունեն, կարող է բերել նույնպես գյուղատնտեսական գործիքներ և տնտեսության մեջ

հարկավոր այլ առարկաներ: Կոոպերացիան այս աշխատանքի համար ստանում է իր ծախսերը և փոքր ոգոտ:

Բացի այս ամենից, սպառողական կոոպերացիան հոգ է տանում, փոր մանավանդ գյուղի սպառողականում զբաղվեն նորածնունդ յերեխայի և նրա մոր համար հարկավոր բոլոր առարկաները և այդ առարկաները ծախվեն եժանդիով: Սպառողական կոոպերատիվները, յեթե ուժեղ են, իրենց կից բաց են անում մանկամսուրներ, ուր բանվորունին և զեղջկունին կարող են թողնել իրենց յերեխաներին գործի գնալու ժամանակ:

Սպառողական կոոպերատիվը փորքան շատ անդամներ ունի, այնքան, նշանակում է, նա շատ անդամավճարներ կունենա: Իսկ փորքան շատ անդամավճարներ ունենա կոոպերատիվը, այնքան նա հարուստ կլինի, այնքան նա ուժավ կունենա զրսից շատ եժանդ և լավ ապրանք բերելու և շատ ապրանք գնելու իր անդամներից (գյուղում) զբրտում ձեռնտու գներով ծախելու համար: Այս պատճառով բոլոր բանվորունիները, զեղջկունիները և տնայնագործունիները պետք է անդամ գրվեն սպառողական ընկերությունը, ուժեղացնեն սպառողականը և սպառողականի միջոցով իրենց:

Վերևում տեսանք, փոր կոոպերացիայի տեսակները մի քանի յեն, — սպառողական, գյուղատնտեսական, վարկային և տնայնա-արհեստագործական: Սակայն, բոլոր կոոպերատիվները գործում են ջոկ-ջոկ, բայց նրանց ձանապարհը մեկ է, — նրանց բոլորի նպատակն է հավաքական, միացած ուժերով լավացնել բանվորի և գյուղացու գրությունը, թե կնոջ և թե տղամարդու:

9. ԻՆՏՊԵՍ ՊԻՏԻ ՄՏՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՅԱՆ ՄԵՋ

Վերևի բացատրություններից հետո պարզ է, փոր գյուղացիությունն ու բանվոր դասակարգի համար ձեռնտու յե, ինչքան կարելի յե, ուժեղացնել կոոպերացիան:

Քաղաքի և գյուղի աշխատավորները, ինչքան այդ հնարավոր է, պետք է կոոպերատիվի անդամ դառնան մեծ թվով և անդամավճար մտցնեն, փորպեսզի հարուստի ու մամուսի կապիտալի դեմ դուրս կարողանան գալ ավելի մեծ ընդհանուր ուժով: Հենց սրանով էլ մենք ոգնած կլինենք խորհրդային պետությունը բանվորա-գյուղացիական յերկրը ամրացնելու գործի մեջ:

Այստեղ ինձ կարող են հարցնել զեղջկունիները. «Այս ամենը շատ լավ, ընկեր: Թող գյուղի տղամարդիկ էլ կոոպերատիվի անդամ դառնան: Մենք, գյուղի կանայքս, թեև լավ ենք հասկանում, փոր պետք է կոոպերացիայի մեջ մանել, բայց մենք անդամավճարի համար փող չունենք: Մենք ունենք հավ, բուրդ, բմբուլ, ձու, մեղր, յուղ, պանիր: Գուլպա-մուլպա էլ, տան շալ ու այդ տեսակ մանր-մունր բաներ էլ մեզ մոտ կճարվի: Այդ ամենի մենք տեր ու տիրականն ենք և ինչպես ուզենք, այնպես էլ կվարվենք մեր այդ ունեցածի հետ: Բայց փող չունենք ու չունենք: Գյուղացու տնտեսություն մեջ կինարմատի ձեռքը շատ քիչ է պատահում, փոր փող ընկնի: Բա վո՞նց անենք, ընկեր, փոր փող չունենք»:

Պատասխանեմ ձեր այդ հարցին: Ի՛նչ անենք, փոր փող չունենք: Փողի տեղ անդամավճարի համար կարող եք ձեր ունեցած ապրանքից տալ և ապրանքի գինը հաշվել անդամավճարի տեղ: Յեթե անդամավճարը, ասենք, մի, յերկու, յերեք ռուբլի յե, այդքանի էլ յուղ կամ պանիր, կամ ձու, բուրդ և նման առարկաներ կտաք: Յեթե մի անգամից դժվարանում եք անդամավճարը փողով կամ ապրանքով տալ, կարող եք մաս-մաս տալ մի քանի ամսում կամ մի տարում, մինչև փոր անդամավճարը լրանա: Մի ամսում կտաք, որինակի համար, քսանընինգ կոպեկ կամ զրա տեղ ձուեր, յերկրորդ ամիսը նույնքան կամ գիմացը յուղ և այլն: Այսպիսով աննկատելի կտաք, կվերջացնեք մի քանի ամսում կամ մի տարում ձեր անդամավճարը: Յեթե կոո-

պերատիվը ձեզ հարմար աշխատանք ունի, կարող եք, նա-
յած անդամավճարին և գործին, մի կամ մի քանի որ աշ-
խատել ու աշխատանքը հաշվել անդամավճարի տեղ:

Որինակ, յեթե կոոպերատիվը ծակ պարկեր (մեշուկներ)
ունի կարկատելու, ձեզանից մի քանիսը կարող են այդ
պարկերը կարկատել և կոոպերատիվի անդամ դառնալ:
Յեթե չեք ուզում անդամավճարի տեղ բուրդ, յուղ, պա-
նիր և նման առարկաներ տալ, այդ ապրանքներից կարող
եք ծախել կոոպերատիվին, փող ստանալ և այդ փողով
անդամավճարը տալ:

10. ԳԵՂՋԿՈՒՆԻՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒԺԵՂԱՅՆԵԼ
ԿՈՈՊԵՐԱՅԻՍՆ

Բայց, գեղջկուհի ընկեր, միայն անդամավճարով չե,
փորով ուժեղ ե կոոպերացիան: Ուշժը միայն փողի մեջ չե:

Այս գրքույկի հենց սկզբում յես ասացի, վոր կոոպե-
րացիա նշանակում ե միջոցների, ջանքերի և աշխատանքի
միացում, մեկտեղացում: Պետք ե կոոպերացիայի անդամ-
ները իրենք այնպես անեն, վոր աճի ու զորանա կոոպե-
րացիան: Անդամների խնամագործունեյությունը, — ահա ին-
չով ե ամենից ավելի ուժեղ կոոպերացիան: Կոոպերատիվի
գործը պետք ե զիտենալ լավ կատարել: Ապրանք գնելու
ժամանակ պետք ե անդամներին հարկավոր ապրանքներ
գնել: Կոոպերատիվը պետք ե լուսավորե իր անդամներին,
վոր նրանք հասկանան, թե ինչի համար ե կոոպերացիան
պետք և ինչպես պետք ե նրա մեջ աշխատել: Կոոպերա-
ցիան պետք ե այնպես անե, վոր նրա անդամները կարո-
ղանան հավաքական ույթերով թե սերմացուն ջոկջկել տե-
սակների, թե մեքենաներ գնել, թե թուղուններ ու անա-
սուններ պահել ու բաղմացնել:

Կոոպերատիվի ամեն մի անդամը առանձին և բո-
լոր անդամները միասին պետք ե հետևեն, վոր կոոպերա-
տիվի անտեսությունը, գործը լավ տարվի: Կոոպերատիվը

նման ե մի շենքի, վորի հիմքը նրա բոլոր անդամների ընդ-
հանուր աշխատանքը, ինչպես ասում են, հավաքական ինք-
նագործունեյությունն ե: Յեթե այդ ինքնագործունեյու-
թյունը ուժեղ ե, հաստատուն, հաստատուն ել կլինի կո-
ոպերատիվի գործը:

Իսկ կոոպերատիվը ուժեղ լինելու համար հարկավոր
ե, վոր գեղջկուհին ել շուտ-շուտ լինի կոոպերատիվի խա-
նութում, մասնակցե կոոպերատիվի անդամների ընդհանուր
ժողովներում: Պետք ե գեղջկուհին հետևի իր սպառողա-
կան ընկերության գործունեյությանը և չորս աչք լինի
տեսնելու համար, թե կոոպերատիվի գործերը ինչպես են
գնում: Գեղջկուհին ընդհանուր ժողովում պետք ե պա-
հանջե, վոր կոոպերատիվի վարչությունը իրենց ընտրած
անդամներին հաշիվ տա, թե ինչպես ե աշխատել նա, այդ
վարչությունը: Գեղջկուհին պետք ե ստուգե, ինքը համոզվի,
թե ճիշտ ե, վոր գործը կանոնավոր ե գնում և ոգուտ ե
բերում կոոպերատիվի անդամներին: Պետք ե նա հետևի,
չլինի թե վախճառունները խցկվել են կոոպերատիվի մեջ:
Գողջկուհին պետք ե մտիկ անե, վոր չլինի թե կոոպերա-
տիվի մեջ գործողները խնամիություն են սարքել խանութ-
պանների, առևտրականների և տերտերների հետ, ուտում
են հասարակական սեփականությունը և դրանով քանդում
են ընդհանուր գործը, վնաս են տալիս կոոպերատիվի ան-
դամներին:

Այս ամենը անելու համար գեղջկուհին չպետք ե բու-
վականանա միայն ընդհանուր ժողովները գնալով: Գեղջ-
կուհին նույնպես պետք ե իբրև անդամ մտնի վերաստու-
գիչ հանձնաժողովի մեջ, վոր կարողանա ընկերության
գործերը ստուգել, գործերին հսկել, նրանց լավ ու վատը,
ուղիղն ու սխալը մոտից տեսնել և ժամանակին միջոց
ձեռք առնել կոոպերատիվը ուղիղ ճանապարհի վրա գնելու
համար: Պետք ե մոտից հետևել վարչության գործունեյու-
թյան: Գեղջկուհիները պետք ե կոոպերացիայի հարցերը

քննեն իրենց պատգամավորական (գեղեգատունիներին) ժողովներում, խրճիթ-ընթերցարանների գրույցներին ժամանակ, գյուղացու տներում (այդպիսի տներ Ռուսաստանում կան, Հայաստանում ել բացվում են, — առաջինը բացվում է Յերևանում, շուտով բացելու յեն նույնպես գավառներում): Այսպես աշխատելով, գեղջկուհիները լավ կը ծանոթանան կոոպերատիվ գործին և կարող կլինեն աշխատելու վարչությունների մեջ ել, ուր գեղջկուհիները նույնպես պետք է մասնեն իբրև ընդհանուր ժողովից ընտրված անդամներ: Թե ինչի յե հարկավոր գեղջկուհուն սպառողականի վարչության անդամ դառնալ՝ այդ մենք կիմանանք ներքևում:

11. ՎՈՐՏԵՂ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ՄԱՍՆԱԿՅԵԼ ԳԵՂՋ- ԿՈՒՂԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Վոչ վոք գեղջկուհուց լավ չգիտե, թե ինչ է հարկավոր նրա գյուղացիական տնտեսության համար: Նա, նստելով վարչության մեջ, ամենքից լավ կիմանա, թե ինչ ապրանքներ պետք է բերել տա սպառողական ընկերության խանութի համար:

Յերբ գյուղացին քաղաք ծախելու յե տանում մի ապրանք, ապրանքի գինը քաղաքում խմելու յե տալիս կամ կորցնում է, կամ հանում են փողը նրա զրպանից, — ախր ամենից ավելի այդ կորուստը գյուղացու կինն է զգում: Նա յե, վոր գիտե, թե տունը ինչ պակասություն ունի, բայց այդ պակասությունը չի կարելի ծածկել, վորովհետև նրա ամուսինը (մարդը) այս կամ այն պատճառով քաղաք վաճառքի տարած ապրանքից ստացած փողի գլխին բարեզցել: Յեթե գյուղում սպառողական խանութ լիներ, փողը չեր կորչի, — գյուղացին իր մթերքը սպառողականին կծախեր, սպառողականից ել կվերցներ այդ փողով իրեն հարկավոր ապրանքը:

Գյուղում շատ անգամ ել այնպես է լինում, վոր տղամարդը ծուլ, վոր ծախսող, փչացնող է, իսկ տունը դարձնողը և պահողը կինն է լինում: Այդպիսի տղամարդը ապրանքը տանում է քաղաք և ծախում է ու փողի մի մասը վառնում: Գալիս կնոջը ասում է, վոր ապրանքը այսքանի ծախեցի: Կինը տեսնում է, վոր ամուսինը իրեն խաբում է, վոր ապրանքը ավելի թանգ է ծախել և փողի մի մասը փչացրել է. կինը այս բանը հասկացում է ամուսնուն, քթի տակ փնթփնթում է, բայց ինչ անե, ձեռքից ինչ է գալիս, — պետք է լռե. ամուսինը ասում է, վոր ապրանքը այդ որը գին չուներ, այդ պատճառով ել ինչքան ավին, այնքանի ել ծախեց: Խեղճ կինը պետք է լռե, վորովհետև ամուսնու ասածի սուտն ու ճշմարիտը (ուղիղը) չի կարող ստուգել: Լինում են նույնպես այնպիսի տղամարդիկ, վոր իրենց կանանց չեն խաբում, թե քանիսի յեն ապրանքը ծախել, բայց նրանք միամիտ են և քաղաքում նրանց խաբում, ապրանքը չնչին գնով ձեռքերից առնում են մասնավոր խանութպանները:

Յեթե իր գյուղում կամ հարևան գյուղում կոոպերատիվ լինի, այս ամենը չի լինի, — գեղջկուհին չի վնասվի: Յեթե գեղջկուհիներից ել լինին կոոպերատիվի վարչության, վերաստուգիչ հանձնաժողովի կամ կրպակային (խանութի) հանձնաժողովի մեջ, այն ժամանակ կոոպերատիվի ու ամբողջ գյուղի գործը ավելի լավ կգնա: Կոոպերատիվը վոչ վոքի չի խաբի, խելքը բան չկորող մի յերեխա ել ուղարկես կոոպերատիվ խանութը մի բան ծախելու կամ գնելու, կոոպերատիվը չի խաբի յերեխային: Յեթե նկատվեց, վոր կոոպերատիվի մեջ մտել են խաբեբա մարդիկ և խաբում են, կոոպերատիվի անդամները այդպիսիներին դուրս կվանդեն, կոոպերատիվի վնասը կվերցնեն նրանցից, զեռ լավ պատժել ել կտան դատարանի միջոցով:

Ահա թե ինչի գեղջկուհին պետք է իր կոոպերատիվը աչքի լույսի պես պահե և պետք է մտնի նրա մեջ աշ-

խառնելու, նրան ավելի զորեղացնելու համար: Ուժեղ և կոռպերատիվը, ուժեղ և նույնպես գյուղը: Թույլ և կոռպերատիվը, թույլ և գյուղն էլ:

12. ԻՆՉ ԿԱՐՈՂ Ե ՍՆԵԼ ՈՒԺԵՂԱՅՈՒԾ ԿՈՈՊԵՐԱՅԻՍԱՆ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ԿՅԱՆՔԸ ԹԵԹԵՎԱՅՆԵ-ԼՈՒ ՀԱՄԱՐ

Բայց ընդհանուր գյուղացիական և ընդհանուր պետական շահից, գեղջկուհին ունի իր առանձին, կանացի շահը կոռպերացիան ուժեղացնելու համար: Ահա, տեսե՛ք, այն որից սկսած, յերբ հաստատվեց մեզանում խորհրդային իշխանությունը, բանվորուհին ծննդաբերության (յերեխա բերելու) ժամանակ չի աշխատում, իսկ իր ուժիկը այդ որերին ստանում է ապահովագրական գանձարկղից:

Խորհրդային իշխանությունը այսպես պահպանում է մորն ու յերեխային, վոր մայրը առողջությունը չկորցնե և ուժաքամ չլինի ու ծնի ուժեղ, առողջ յերեխա, վոր այդ յերեխան մեծանա և դառնա իր բանվորագյուղացիական յերկրի համար առողջ ու ամրակազմ աշխատավոր: Նույնպես հարկավոր է, վոր մայրը հղիության և յերեխան կերակրելու ժամանակ լավ սնունդ ստանա: Խորհրդային պետությունը սրա համար ել որենք ունի: Այդ որենքով ապահովագրական գանձարկղը տալիս է մոր համար հատուկ փող:

Բայց ապահովագրական այսպիսի գանձարկղներ կան միայն քաղաքներում, ուր գործարանները իրենց ամեն մի բանվորուհու համար մտցնում են ապահովագրման գումարը: Գործարանը իր յուրաքանչյուր բանվորի և բանվորուհու ամսական ուժիկի դիմաց ամեն ամիս մտցնում է սոցիալական (հասարակական) ապահովագրման գանձարկղը վորոշ գումար: Յերբ բանվորուհին կամ բանվորը հիվան-

դանում են (կամ բանվորուհին յերեխա յե ծնում), ապահովագրական գանձարկղը նրանց ուժիկ է տալիս մինչև առողջանալը. բանվորն ու բանվորուհին սեփականություն չունեն, և յեթե այդ ապահովագրությունը չլիներ, նրանք, բնական է, անտանելի դրություն մեջ կընկնեյին և ուտելու բան չեյին ունենա:

Ահա ապահովագրման գանձարկղը մտած այս փողերն են, վոր արվում են բանվորուհուն իբրև ապահովագրման գումար: Այդ միջոցները բանվորուհին ստանում է հղիության և յերեխաբերության ժամանակ՝ նորածնունդի սննդի և խանձարուրի (բարուրի) համար:

Այս տեսակ բան գյուղում բոլորովին չկա: Չկա, վորովհետև գեղջկուհին իր ծանր աշխատանքը կատարում է իր սեփական տնտեսության մեջ, վորովհետև գյուղում չկա վոշ մի տեղ և վոշ որ, վորից կարելի լիներ ապահովագրման փող վերցնել և իրագործել մայրության և մանկության պահպանումը գեղջկուհու համար:

Քաղաքում բանվորուհու աշխատանքը հեշտացնում է մեքենան: Իսկ գյուղում մի գյուղացու ույժերից բարձր է գյուղատնտեսական մեքենա գնելը:

Ուրիշ բան է, յերբ մի քանի տուն միանում և ընկերություն են կազմում: Մի անգամից գեղջկուհու գրությունը թեթևանում է, անասունների հոգալը հերթով է կատարվում: Թեև ընկերությունը մի տնից շատ անասուններ ունի, բայց այս դեպքում ամեն մի գեղջկուհու բաժին աշխատանքը ավելի քիչ է գալիս: Ընկերությունը ձեռք է բերում սերգատ ել, գյուղատնտեսական գործիքներ ել: Ընկերությունը գնում է նույնպես հնձիչ մեքենա: Գեղջկուհին շունչ է քաշում և ազատվում է ամառվա ամենատաժանելի աշխատանքից, — արտը մանգաղով կամ գերանդիով հնձելուց:

Հարկավոր չե ամեն որ թոնիր վառել, ծուխ ու մրի մեջ կորչել հաց թխելու համար: Կոռպերատիվը հենց վոր

քիչ ուժեղացավ, կունենա փուռ, վսրը գյուղի համար հաց կթխե: Գեղջկուհին ազատ ժամանակ կունենա խրճիթ-ընթերցարան մտնելու, պատգամավորական ժողով գնալու, գրագիտություն սովորելու, գրքույկ կամ «Հայաստանի Աշխատավորունի» ամսագիրը կարդալու և այլն:

Բայց գեղջկուհու համար մասնավոր նշանակություն ունի մանկամսուրը: Հենց վոր փոքր ի շատե ուժեղացավ սպառողական ընկերությունը, նա իր անդամ գեղջկուհիների համար կսարքե մանկամսուր:

Առաջ կոոպերատիվը բաց կանե ամառային մանկամսուր, վոր գեղջկուհին ազատվի յերեխային հնձին իր հետ դաշտ տանելուց կամ նրան կիսակույր տառի մոտ թողնելուց, վոր չի կարողանում յերեխային մոտիկ անել:

Թե վոր քիչ ել կոոպերատիվը ուժեղացավ՝ նա ժամանակավոր մանկամսուրը մշտական կդարձնե և այսպիսով գյուղի մանկամսուրը վոչնչով յետ չի մնա քաղաքի, գործարանի մանկամսուրից: Մանկամսուր բաց անելուց հետո մոտիկ կտաս ու կտեսնես, վոր գյուղի յերեխաները առաջվա չափ շատ չեն մեռնում «փորացավից»: Կաթը իրենցն ե, գյուղիցը: Կոոպերատիվի կովերին մոտիկ ե տալիս անանաբույժը: Առողջ կովերից ստացված կաթը յերեխաներին չի վարակի, չի դիպչի: Յերեխաներին լավ են մրտիկ անում: Ամեն ինչ մաքուր ե: Մայրերին ել սովորեցնում են, թե ինչպես պետք ե յերեխաներին նայեն (հոգ տանեն, խնամեն): Վոչ միայն մայրերը, այլ և տատիկները սկսում են զարմանալ, թե ինչպես յերեխայի լացը կտրելու համար տալիս եյին խեղճին ծծելու լաթի մեջ զրած ծամած հաց: Նրանք զարմանում են, թե ինչպես եյին կարողանում իրենց սիրելի յերեխաներին իրենց տգիտությունից այսպես տանջել ու մեռցնել:

Կոոպերատիվի պատճառով գեղջկուհու մեջքից շատ ծանրություն ե ցած գալիս: Գեղջկուհին ազատ ժամանակ շատ ե ունենում, այդ պատճառով ել ավելի շատ ե կա-

րողանում հասարակական հարկավոր գործերի մեջ մտնել: Նա մտնում ե թե իր գյուղխորհուրդը, թե գյուղի գործկոմը, թե կոոպերատիվի վարչությունը, թե դպրոցական խորհուրդը, թե փոխադարձ ոգնություն կոմիտեն: Կսկսե ժողովներ հաճախել (գնալ): Համագյուղացիք սկսում են նրան բուրդովին ուրիշ կերպ վերաբերվել,—սկսում են նրան ավելի մեծ պատվով նայել, ավելի հարգել: Ինքը, գեղջկուհին ել, սկսում ե իր ույժերին ավելի հավատալ: Նա սկսում ե ավելի լավ հասկանալ, թե ամեն բան ինչպես պետք ե անել, վոր բանվորի ու գյուղացու կյանքը ավելի լավանա և դառնա այնպես, ինչպես ուղում եր և սովորեցնում եր մեզ ընկ. Լենինը:

Սպառողական ընկերությունը առաջ ե գնում և իր խանութից ծախում ե հղի և յերեխային կերակրող մոր ու նրա մանկան համար պետքական ամեն տեսակի առարկաներ, այն ել արտոնյալ, այսինքն սովորականից ցածր գրաներով: Այնպես ե դուրս գալիս, վոր կոոպերատիվը նրան ցույց ե տալիս այն ոգնություն նման ոգնություն, վոր գործարանային բանվորուհուն տալիս ե ապահովագրական դանձարկղը:

Ինչքան սպառողական ընկերությունը անդամներ ունի, ինչքան նա հարուստ ե, այնքան ավելի եժան գնով նա ապրանք կարող ե ծախել հղի և յերեխային կերակրող գեղջկուհու ու նրա մանկան համար: Յերը գեղջկուհին չքավոր ե և կոոպերատիվը ավելի ուժեղ ե, նա կարող ե հղի և յերեխա կերակրող իր անդամ գեղջկուհուն նրան այդ հղի և յերեխա կերակրող իր անդամ գեղջկուհուն (առքով), ժամանակ հարկավոր տարանքը տալ ինքնարժեքով (առքով), այսինքն այն գնով, ինչ գնով ապրանքը գնել ե կոոպերատիվը, վրան յեկած միայն ճանապարհածախսը և չափելանելով այդ ինքնարժեքին վոչ մի կոպեկ:

Առաջ գնալով և ուժեղանալով, կոոպերացիան սկսում ե տեղ-տեղ գեղորայք ել ծախել, վոր հարկավոր են մանավանդ մայրերին ու նրանց յերեխաներին:

Ինչպես հայտնի յե, ամեն մի գյուղացի իրավունք ունի ոգտվելու իր շրջանի բժշկի ոգնությունից: Բայց գյուղացու համար շատ ել հեշտ չե միշտ գնալ բժշկի մոտ կամ, մանավանդ, տանել նրա մոտ իր հիվանդ յերեխաներին, վորովհետև բժշկի տեղը շատ անգամ բավականին հեռու յե լինում գյուղից: Ավելի լավ կլինի, յեթե ժամանակ առ ժամանակ ինքը, բժիշկը, գա այն գյուղը, վորը իր մեջ բժիշկ չունի: Ռուսաստանի մի քանի նահանգում այս բանը անում են սպառողական կոոպերատիվները: Նրանք տեղական առողջապահական բաժինների (առբաժին) հետ միասին իրենց հաշվին ամիսը մի անգամ հրավիրում են գյուղ բժիշկ: Կոոպերատիվի հիվանդ անդամները ցույց են տալիս բժշկին իրենց, իրենց հիվանդ յերեխաներին ել:

Բժիշկը այդ դեպքերում մտիկ ե տալիս մանավանդ յերեխաներին և մայրերին խորհուրդներ ե տալիս, թե ինչպես պետք ե ինամել (շահել) յերեխային, վոր նրանից առողջ մարդ դուրս գա: Այսպիսով, կոոպերացիան գյուղում սկսում ե կազմակերպել նույնպես կոնսուլտացիաներ յերեխաների համար: Կոնսուլտացիա խոսքը հայերեն չե, յեվորոպական խոսք ե և նշանակում ե խորհուրդ, այս դեպքում՝ բարի խորհուրդ մայրերին այն մասին, թե ինչպես կարելի յե ավելի լավ կերպով մտիկ անել յերեխաներին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ քաղաքներում հարուստ մարդիկ ուժիկով իրենց համար առանձին բժիշկներ եյին պահում, — տնային բժիշկներ եյին կոչվում նրանք: Այդ տնային բժիշկները սովորեցնում եյին հարուստներին, թե ինչպես պահել յերեխաներին, վոր նրանք առողջ ու պնդակազմ լինեն: Յեզ հարուստների յերեխաները այդ պատճառով լինում եյին սպիտակ, կարմրաթուշ ու հաստ: Բուրժուայի յերեխան առողջ, պնդակազմ եր դուրս գալիս, և նրանք տանյալներով չեյին մեռնում, ինչպես մեռնում են գեղջկուհու և բանվորուհու յերեխաները: Գյուղացիներն ու բանվորները ի հարկե ոգուտ չունեն, վոր աղաների

և հարուստների տղայքը այդպես են դուրս գալիս: Բուրժուաների այդ չաղացած և պնդակազմ ձագերի լծից բանվորների ու գյուղացու վիզը ել ավելի յեր կռանում:

Իսկ այժմ, խորհրդային իշխանության որոք և այդ իշխանության ոգնությամբ ուժեղացած կոոպերացիան գեղջկուհու համար կանե այն ամենը, ինչ ցարի ժամանակ միայն բուրժուաների ույժն եր պատում անել իրենց համար: «Միլիոնը ույժ ե» — ասում ե կոոպերացիան: Այս նույն բանն ե, ինչ վոր ասում են բանվորները. «պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»: Յեթե աշխատավոր գեղջկուհիները միանան և ուժեղացեն կոոպերացիան, նրանք կոոպերացիայից կստանան այնպիսի ոգնություն, ինչպիսի ոգնություն նրանք վոչ մի դեպքում չեն թյուն, ինչպիսի ոգնություն նրանք վոչ մի դեպքում չեն ստանա, յեթե ջոկ-ջոկ ապրեն ու գործեն, յեթե իրենց հալալ աշխատանքով վաստակած կուպեկները տանեն ու լցնեն խանութպանի գրպանը:

Ահա այս բոլոր պատճառներով ել այնքան հարկավոր ե կոոպերացիան գեղջկուհու: Կոոպերացիայի միջոցով ե կոոպերացիան պատճառներով և գյուղացիությունը կլավացնեն իրանվոր դասակարգը և գյուղացիությունը կլավացնեն յերենց վիճակը, կմիացնեն իրենց ու իրենց պետության ույրենց փրճակը, կմիացնեն յերենց պետության ույրենց փրճակը հարուստների և վաճառականների դիմաց: Կոոպերացիան կթեթևացնե գեղջկուհու և բանվորուհու կյանքը, վորովհետև նա կոգնե նրանց թոթափելու (վայր պցելու) յերենց տնտեսության ծանր լուծը և թե ու թիկունք կլի: Կոոպերացիան կհեղափոխե յերեխաների հոգսը քաշելու ժամանակ:

Այս բոլորի հետ միասին կոոպերացիան կոգնե գեղջկուհուն, վոր նա հաստատուն վոտքի կանգնե, շտկե իր կռացած մեջքը, վորի վրա ով ասես վոր չեր նստում ցարի իշխանության ժամանակները:

Հեղափոխության այս տարիներին գեղջկուհին շատ բան սովորեց: Նա իր նեղ, փոսած ու մզլած աշխարհից

աչքը բարձրացրեց և սովորեց նաև բանվորա-գյուղացիական լայն ու հզոր այն կյանքին, վորի դռները նրա առաջ լայն բաց արեց Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Գեղջկուհին պետք է այժմ սովորի իր ուշժերը տալ ու գործածել այդ կյանքի համար, վոր շուտով գա այն յերջանիկ, նոր, ուրախ կյանքը, վորին ձգտում են գիտակից բանվորները և բանվորուհիները, գեղջուկները (գյուղացիք) և գեղջկուհիները:

13. ԿՈՈՊԵՐԱՅԻՄԱՆ ՈՒԺԵՂԱՅՆԵԼՈՎ ՄԵՆՔ ԿՍՏԱՐԱԾ ԿԸ-
ԼԻՆԵՆՔ ԼԵՆԻՆԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԸ

Կոոպերացիան գեղջկուհուն կսովորեցնեւ ընդհանուր ուշժերով, մեկտեղ աշխատել, վոր գործը արագ առաջ գնա, վոր նրա մեջքի բեռը թեթեւ լինի: Կոոպերացիան կոգնեւ գեղջկուհուն կարգի բերել իր անտեսությունը և մինչև վերջը ազատվելու ամեն տեսակի լծից: Կոոպերացիան կսովորեցնեւ գեղջկուհուն, թե ինչպէս կարելի յեւրնկ. Լենինի հիմնած կոմմունիստական կուսակցության ղեկավարութեամբ իր ուշժերը գործ գնել բոլոր աշխատավորների այն լուսավոր ապագայի համար մղվող մեր մեծ և ընդհանուր կռիւի վրա, վորի համար իր ամբողջ կյանքը նվիրեց ընկ. Լենինը: Ընկ. Լենինը իր կյանքը չխնայեց, վոր այս մեծ կռիւի համար ի մի հավաքե, մի ուշժ և մի ընտանիք դարձնեւ բոլոր բանվորներին ու գյուղացիներին, տղամարդկանց ու կանանց, ծերերին ու յերիտասարդներին վոչ միայն մեր, խորհրդային յերկրներում ու խորհրդային հանրապետությունների մեջ, այլ և ամբողջ աշխարհում:

Ընկեր Լենինը մեզ սովորեցնում եր հասկանալ, վոր այժմ հարուստների դիմաց վերջնական հաղթանակ տանելու համար մենք պետք է միայն մի բան ել անենք, — ինչպէս հարկն է ուժեղացնենք և զարգացնենք կոոպերա-

ցիան: Բոլոր իսկական աշխատավորների իսկական և գլխովին կոոպերացումը (կոոպերատիվների մեջ մտնելը), — ահա մեր այժմյան ամենակարեւոր խնդիրը, զրոււմ եր մեր ընկեր Լենինը:

Ընկ. Լենինը այլևս մեզ հետ չէ: Մեռավ գեղջկուհու ամենալավ ընկերն ու ուսուցիչը: Բայց մնաց կոմմունիստների կուսակցությունը, վոր իր ամբողջ կյանքի ընթացքում հավաքում եր ընկ. Լենինը լավագույն (ամենալավ) բանվորներից ու գյուղացիներից: Ընկ. Լենինը իր ամբողջ կյանքի ընթացքում հավաքում և սովորեցնում, խրատ եր տալիս այդ ամենալավ ու գիտակից աշխատավորներին բանվոր դասակարգի և գյուղացիության բարեքի, բախտավորության համար:

Կոմմունիստական կուսակցությունը կոգնեւ գեղջկուհուն, վոր նա հասկանա և կատարեւ ընկեր Լենինի ավանդները (պատվերները), ուժեղացնեւ կոոպերացիան և կոոպները (պատվերները), ուժեղացնեւ այն գործը, րացիայի միջոցով ուժեղացնեւ ու ամրացնեւ այն բոլոր ուշժերը և ամբողջ կյանքը ընկեր Լենինը: Ընկեր Լենինը իր կյանքը տվեց այդ դործի համար, վորովհետեւ այդ գործը այն բոլորի ազատ ու յերջամաք, վորոնց ճնշում ու կեղեքում եր կապիտալը: Նիկ ապագան է, վորոնց ճնշում ու կեղեքում եր կապիտալը:

20 փետրվարի 1924 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Յերես
Թարգմանչից	3
1. Ի՞նչ է կոռպերացիան	5
2. Ի՞նչի՞ համար է կոռպերացիան և ի՞նչպես է կառուց- ված նա	8
3. Ո՞վ է կոռպերացիայի թշնամին	12
4. Բացի սպառողական կոռպերատիվներից՝ ուրիշ ի՞նչ տե- սակի կոռպերատիվներ կան և նրանցից ի՞նչ ոգուտ ունի բանվոր ու գյուղացի մարդը	13
5. Վարկային կոռպերացիա	13
6. Գյուղատնտեսական կոռպերացիա	17
7. Տնայնա-արհեստագործական կոռպերացիա	21
8. Արդյոք հարկավոր է կոռպերացիան գեղջկուհուն	26
9. Ի՞նչպես պիտի մտնել կոռպերացիայի մեջ	32
10. Գեղջկուհիները ի՞նչպես կարող են ուժեղացնել կոռպե- րացիան	34
11. Վերտեղ և ի՞նչպես կարող է մասնակցել գեղջկուհին կո- պերատիվ աշխատանքին	36
12. Ի՞նչ կարող է անել ուժեղացած կոռպերացիան գեղջ- կուհու և բանվորուհու կյանքը թեթևացնելու համար	38
13. Կոռպերացիան ուժեղացնելով մենք կատարած կը լինենք լեռնի պատվերները	44



ԳԻՆՆ Ե 25 ԿՈՂ.

300
2719-ՈՍ

«Զ Ա. Կ Կ Ն Ի Գ Ա.»

Թիֆլիս, Ռուսթավելու պր., 24, հեռախոս 17-66